**ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ**
**պայմանագիր կնքելու որոշման մասին**

Սույն հայտարարությունը հրապարակվում է «26» ապրիլի 2024թ.-ին՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի պահանջների հիմքով և սահմանված նպատակներին համապատասխան:

ՀՀ կենտրոնական բանկը ստորև ներկայացնում է «**ՀՀ կենտրոնական բանկի կարիքների համար օդորակման համակարգի ձեռքբերման նպատակով կազմակերպության ընտրության CBA-2024-006 ծածկագրով բաց մրցույթի**» ընթացակարգին ներկայացված հայտերի գնահատման և ընտրված մասնակիցների ընտրությունը հիմնավորող պատճառների, անգործության ժամկետի և շահերի բախման վերաբերյալ ամփոփ տեղեկատվությունը:

Բաց մրցույթին մասնակցել են հետևյալ կազմակերպությունները՝

1. **«ՑԵԼՍԻՈՒՍ» ՍՊԸ**
2. **«ԱՐՄ ԿԼԻՄԱՏ» ՍՊԸ**

Մասնակիցների կողմից ներկայացված հայտերը գնահատվել են հրավերի պահանջներին համապատասխան՝ ստուգվել են հայտերով ներկայացված փաստաթղթերի, ինչպես նաև մասնակիցների ներկայացրած գնման առարկայի բնութագրերի համապատասխանությունը օրենքով և հրավերով սահմանված պահանջներին, գնահատվել են մասնակցության իրավունքը և որակավորման չափանիշները:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի «25» ապրիլի 2024թ. նիստի ընթացքում ամփոփվել է վերը նշված բաց մրցույթի արդյունքները: Հաղթող մասնակից է ճանաչվել **«ՑԵԼՍԻՈՒՍ» ՍՊԸ-ն:**

Սույն ընթացակարգի դեպքում անգործության ժամկետը 10 (տասը) օրացուցային օր է:

Սույն ընթացակարգի շրջանակում շահերի բախում չի հայտնաբերվել:

ՀՀ կենտրոնական բանկի Գնահատող հանձնաժողովի քարտուղար
Սիրան Եգանյան

**Պատվիրատու՝ ՀՀ կենտրոնական բանկ**